

հեն, որ մաղ մի չերեւնայ: Եւ այլ յառաջ տասն կամ այլ աւելի խարբուճայք Վոքը, զոր մտեալ ի նոսա հեշտացեալ վայելէի մինչ զի մոռանայի զպանդխտութիւնս եւ զնեղութիւնս իմ:

Եւ յայնկոյս քաղքին էր ՈՂՔՈՍ ԼԵԱՌՆ, զոր ՔէՇԻՇՏԱՂԻ կոչեն. ուր Եօթն մանկուսնքն անդ ննջեցին եւ դարձեալ յարեան, զոր դեռ եւս կան գերեզմանք նոցա. եւ ի գլուխն կայ մեծ եկեղեցի մի. այժմ հանդուցեալ է: Բայց լեառն մեծ եւ բարձր է քան զԱրճիաշու, զոր բնաւ յամառն եւ ձմեռն ոչ վերանայ ձիւնն ի նմանէ. այլ եւ ասին թէ յորդն հոտած նեխած է եւ յորդնած: Եւ մեք ելաք մինչ ուր եկեղեցին էր. եւ այլ ոչ կարացաք գնալ ի վեր, զի սաստիկ քամի էր եւ հով պաղ եւ ձիւնամեծ, թէպէտ ամառն էր. եւ անտի տեսաք որ քաղքին կէսն աւեր եւ այրած էր եւ ամայի ի ձէլալոցն:

Եւ անտի ծովեզերը եկաք ի ՄՈՒԽԱԼԻՃ խասապան: Կացաք անդ ամիս մի եւ հինգ օր. զի էր հարիւր տուն հայի եւ երկու էրէց: Անտի մին օրն հասաք ի ՊԱՆՏՐՄԱՅ խասապան, որ էր ծովու ետլուն: Եւ անդ կայր տնակ մի, ժամ կ'ասէին, եւ քանի մն տուն հայի, մէկ հարեղայ մի եւ էրէց մի. բայց հոռոմ յորով: Եւ կացաք անդ տասն օր: Եւ օրուկէսն գեղօրօք եւ ջիՓթլիկովք՝ ուր Հայք

43 չերեւնա: — 46 զպանտխտութիւնս: — 69 յօլով: